

Գավառի պետական համալսարան

Մագիստրատուրայի ընդունելության քննության հարցաշար

«Հայ գրականության պատմություն» դասընթացից

Հայոց լեզու և գրականություն բաժնի համար

2015-2016 ուստարի

1. Գրի և գրականության ստեղծման պատմահասարակական նախադրյալները և նշանակությունը:
2. Մ. Մաշտոցը հայ գրերի ստեղծող: Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը:
3. 5-րդ դարի հայ պատմագրության գեղարվեստական արժեքը:
4. Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» և նրա նշանակությունը:
5. Ազաթանգեղոսը և նրա «Հայոց պատմություն» երկը:
6. Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» պատմագիտական և գեղարվեստական արժեքը:
7. Վարդանանց ազատամարտի գեղարվեստական պատկերը Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկում:
8. Փարպեցու «Հայոց պատմության» կառուցվածքը և բովանդակությունը:
9. Հայկական հրաշապատում և իրապատում հեքիաթները, դրանց գրական մշակումները:
10. «Սասնա ծռեր» էպոսի կերպարները որպես գաղափարազեղարվեստական ընդհանրացումներ:
11. «Սասնա ծռեր» էպոսի ազգային և համամարդկային գծերը:
12. Գր. Նարեկացին և հայկական վերածննդի սկզբնավորումը:
13. Մարդու դրաման Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում:
14. Գր. Նարեկացու տաղերը:
15. Միջնադարի հայ առակագրությունը. Մխիթար Գոշ և Վ. Այգեկցի: Նրանց առակները:
16. Ֆրիկի կյանքը և ստեղծագործությունը. բանաստեղծի դրաման նրա տաղերում:
17. Միջնադարյան հայրենները, ժանրի յուրահատկությունները և արվեստը:
18. Սայաթ-Նովայի սիրո երգը, խաղերի բովանդակային հարստությունը, պատկերավորման արվեստը:
19. Խ. Աբովյանի կյանքը և ստեղծագործական ուղին:
20. «Վերք Հայաստանի»-ն իբրև վեպ. նրա դերը հայ գրականության զարգացման պատմության մեջ:
21. «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ում արծարծված գրական խնդիրները:
22. «Վերք Հայաստանի» վեպի կառուցվածքը, բովանդակությունը, գեղարվեստական յուրահատկությունները:
23. Մ. Նալբանդյանի գործունեությունը. բանաստեղծը և իրապարակախոսը:
24. Մ. Նալբանդյանի «Կրիտիկա Սոս և Վարդիթերի»:
25. Ռ. Պատկանյանի արձակը /պատմվածքներ, վիպակներ/:
26. Պ. Դուրյանի քնարերգության ընդհանուր բնութագիրը, անձնական դրաման:
27. Պ. Դուրյանը թատերագիր. «Թատրոն կամ թշվառներ» դրաման:
28. Մ. Պեշիկթաշյանի ազգային-հայրենասիրական երգը. «Ձեթունյան երգեր» շարքը:
29. Հայ գյուղի պատկերը Պ. Պռոշյանի վեպերում /«Հացի խնդիր»/:
30. Հայ գյուղի պատկերը Պ. Պռոշյանի վեպերում /«Ցեցերը», «Հունոն»/:
31. Գ. Սունդուկյանը թատերագիր. «Էլի մեկ զոհ», «Պեպո», «Խաթաբալա», «Քանդած օջախ»:
32. Ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական մարմնավորումը Րաֆֆու ծրագրային-քաղաքական վեպերում /«Ջալալեղի», «Խենթ», «Կայծեր»/:
33. Րաֆֆին պատմավիպասան. «Սամվել» վեպի պատմականությունը: Կերպարները և նրանց հոգեբանությունը:
34. Հ. Պարոնյանի սոցիալական երգիծանքը. «Մեծապատիվ նուրացկաններ» երկը:
35. Հ. Պարոնյանի քաղաքական երգիծանքը. «Ազգային ջոջեր» երգիծական դիմապատկերները:
36. Գավառական կյանքի պատկերները Շիրվանզադեի «Նամուս» և «Չար ոգին» երկերում:
37. Հերոսների և միջավայրի ներդաշնակ պատկերումը Շիրվանզադեի «Քառս» վեպում:
38. Շիրվանզադեի թատերագիր. «Պատվի համար» դրաման:
39. Գյուղական կյանքի պատկերները և «գյուղափրկիչ» հերոսները Մուրացանի «Նոյի ագռավ», «Առաքյալը» ստեղծագործություններում:
40. Գյուղական կյանքի պատկերները և «գյուղափրկիչ» հերոսները Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհին» վիպակում:
41. Հերոսների բնավորության և հոգեբանության բացահայտումները Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում:
42. Կնոջ հոգեբանության բացահայտումները Գր. Չոփրապի նորավեպերում:
43. «Կյանքը ինչպես որ է» սկզբունքի դրսևորումը Գր. Չոփրապի նորավեպերում:

44. Նար-Դոսի նորավեպերն ու պատմվածքները. «Սեր թաղը» շարքը:
45. Հոգեբանական ռեալիզմը Նար-Դոսի «Սպանված աղավնին» ստեղծագործությունում:
46. Հոգեբանական ռեալիզմը Նար-Դոսի «Մահը» վեպում:
47. Հովի. Թունանյանի քառյակները:
48. Հայրենիքի և ժողովրդի ճակատագրի թեման Հովի. Թունանյանի քնարերգության մեջ:
49. Թունանյանի «Անուշ» պոեմը. բովանդակությունը, կերպարների հոգեբանության գեղարվեստական հիմնավորումը:
50. Հոգեբանական անցումները Թունանյանի «Թմկաբերդի առումը» պոեմում:
51. Թունանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը. հարազատությունը ժողովրդական էպոսին:
52. Թունանյանի արձակը:
53. Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուն:
54. Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուն: Ուժի և գեղեցկության գովերգը «Հարճը» պոեմում:
55. Աշխատանքի բանաստեղծականացումը Դ. Վարուժանի «Հացին երգը» շարքում:
56. Ավ. Իսահակյանի սիրերգությունը:
57. Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը, մերժմամբ հաստատելու արվեստը, գեղարվեստական մյուս արժանիքները:
58. Ավ. Իսահակյանի արձակը:
59. Լ.Շանթը թատերագիր. «Հին աստվածներ» դրամայի բովանդակությունը և գեղարվեստական յուրահատկությունները:
60. Լ. Շանթի «Ինկած բերդի իշխանուհին» դրաման:
61. Մ. Մեծարենցի քնարերգության բնորոշ գծերը. «Ծիածան» և «Նոր տաղեր» ժողովածուները:
62. Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներ» շարքը:
63. Վ. Տերյանի սիրո երգը:
64. Հոգևոր Հայաստանի ըմբռնումը Տերյանի «Հոգևոր Հայաստան» հողվածում և «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքում:
65. Չարենցի «Տաղարան» շարքը, կյանքի և սիրո երգը:
66. Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմը:
67. Չարենցի «Դանթեական առասպել» պոեմը:
68. Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն:
69. Չարենցի «Դեպի լյառը Մասիս» պոեմը:
70. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը. գաղափարական հարցադրումները, կերպարները, պետական:
71. Դ. Դեմիրճյանի պատմվածքները:
72. Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը. պատմականությունը և արդիականությունը:
73. Դ. Դեմիրճյանի թատերգությունը. «Վասակ», «Երկիր հայրենի»:
74. Դեմիրճյանի «Քաջ Նազար» հեքիաթ-կատակերգությունը. առեղծվածի և կերպարի նոր լուծումը:
75. Բակունցի «Մթնածոր» ժողովածուն:
76. Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ», «Խոնարի աղջիկը», «Միրհավ» նովելները:
77. Ստ. Ջորյանի պատմվածաշարերը:
78. Ստ. Ջորյանի «Պապ թագավոր» պատմավեպը:
79. Ն. Ջորյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության գեղարվեստական արժեքը:
80. Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» ստեղծագործությունը:
81. Գ. Մահարու «Այրվող այգեստաններ» վեպը:
82. Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը:
83. Հովի. Շիրազի քնարերգությունը:
84. Հովի. Շիրազի «Հուշարձան մայրիկիս» ժողովածուն:
85. Նահանջի թեման Շ. Շահնուրի ստեղծագործության մեջ:
86. Կ. Ջաղյանի «Տատրագոմի հարսը» պոեմը:
87. Կորցրած հայրենիքի թեման Հր. Քոչարի և Մ. Գալշոյանի ստեղծագործություններում:
88. Հետպատերազմյան շրջանի հայ պատմավեպը. Ս. Խանգադյանի «Մխիթար սպարապետ» վեպը:
89. Հ. Սահյանի քնարերգությունը:
90. Պ. Սևակի «Մարդը ափի մեջ» և «Եղիցի լույս» ժողովածուները:
91. Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը:
92. Հրանտ Մաթևոսյանի «Մենք ենք, մեր սարերը» վիպակը:
93. Հր. Մաթևոսյանի «Չեզոք գոտի» դրաման:
94. Պ. Չեթունցյանի պատմավավերագրական դրամաները /«Ուտքի, դատարանն է գալիս», «Մեծ լռություն»/:
95. Մ. Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» ժողովածուն:

Գավառի պետական համալսարան

Մագիստրատուրայի ընդունելության քննության հարցաշար «Հայոց լեզու» դասընթացից

բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժնի համար  
2015-2016 ուստարի

1. Հայոց լեզվի զարգացման փուլերը. նոր գրական հայերենի երկու տարբերակները: Ժամանակակից հայոց լեզուն իբրև ազգային, պետական և գրական լեզու:
2. Հայերենի հնչյունական համակարգը: Չայնավոր և բաղաձայն հնչյուններ: Չայնավորների դասակարգումը:
3. Բաղաձայնների դասակարգումն ըստ արտաբերման տեղի, եղանակի, ձայնի և աղմուկի հարաբերության, կազմության:
4. Ժամանակակից հայերենի երկհնչյունները. ուղղագրությունը:
5. Հայերենի բառային շեշտը: Հնչերանգ: Տրամաբանական շեշտ: Վանկ:
6. Հնչյունափոխություն: Հայերենի հնչյունափոխության տեսակները:
7. Մեսրոպ Մաշտոցը և հայոց գրերի գյուտը: Մեսրոպյան այբուբենի առանձնահատկությունները:
8. Բառը որպես լեզվական միավոր. հատկանիշները. բնորոշումը:
9. Բառիմաստ, նրա տեսակները: Բառի մենիմաստություն և բազմիմաստություն: Բառի ուղղակի և փոխաբերական իմաստներ:
10. Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության: Համանուններ: Հոմանիշներ: Հականիշներ, հարանուններ: Նրանց տեսակները, կիրառությունը, ոճական արժեքը:
11. Ածանցում: Ժամանակակից հայերենի ածանցները, նրանց առաջացումը և դասակարգումը:
12. Բառաբարդում. բարդ բառերի տեսակները, ուղղագրությունը:
13. Հայերենի բառապաշարը. հիմնական բառաֆոնդ և բառակազմ: Բառապաշարի դասակարգումները:
14. Հապավում, տեսակները և ուղղագրությունը:
15. Դարձվածային միավորներ, նրանց հարաբերակցությունը բառերի, բառակապակցությունների և նախադասությունների հետ, ոճական արժեքը: Տեսակները:
16. Բառի կառուցվածքը: Ձևույթներ, տեսակները: Բառածն, հիմք և վերջավորություն:
17. Խոսքի մասերը և նրանց դասակարգման սկզբունքները: Նյութական /հիմնական/, քերականական /սպասարկու/ և վերաբերմունքային խոսքի մասեր: Թեքվող և չթեքվող խոսքի մասեր: Խոսքիմասային փոխանցում: Փոխանունություն:
18. Գոյականն իբրև խոսքի մաս: Թվի և առկայացման քերականական կարգերը:
19. Գոյականի հոլովի քերականական կարգը, հայերենի հոլովները, նրանց կազմությունը և շարահյուսական կիրառությունները:
20. Գոյականի քերականական - իմաստային խմբերը:
21. Գոյականի հոլովումները. արտաքին և ներքին հոլովումներ: Այլաձև հոլովումներ:
22. Ածականը որպես խոսքի մաս, տեսակները, կազմությունը, ուղղագրությունը և կիրառությունը:
23. Թվականը որպես խոսքի մաս. տեսակները, կազմությունը, ուղղագրությունը և կիրառությունը:
24. Դերանունը որպես խոսքի մաս, հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ: Ձևաբանական առանձնահատկությունները:
25. Դերանունների տեսակները: Դերանվանական հոլովում:
26. Բայը որպես խոսքի մաս, հիմնական հատկանիշները:
27. Բայածանցներ, տեսակները: Ածանցավոր բայերի խոնարհումը:
28. Բայի սեռերը: Կրկնասեռություն:
29. Անկախ դերբայներ, նրանց կազմությունը և կիրառությունը:
30. Կախյալ դերբայներ, նրանց կազմությունը և կիրառությունը:
31. Բայի դեմքի, թվի, եղանակի և ժամանակի քերականական կարգերը:
32. Սահմանական եղանակ, ժամանակները և նրանց կազմությունը:
33. Ըղձական, ենթադրական /պայմանական/, հարկադրական եղանակներ, նրանց ժամանակաձևերի կազմությունը, արտահայտած իմաստները:
34. Հրամայական եղանակ, կազմությունը, արտահայտած իմաստները:
35. Անկանոն և պակասավոր բայեր, նրանց խոնարհումը:
36. Մակբայը որպես խոսքի մաս: Մակբայի իմաստային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:
37. Մակբայի տեսակներն ըստ կազմության և իմաստի: Մակբայի կիրառությունը:
38. Կապը որպես խոսքի մաս: Կապերի տեսակները և կազմությունը: Կապերի հոլովառությունը:
39. Շաղկապը որպես խոսքի մաս: Շաղկապների տեսակները, կազմությունը և կիրառությունը:
40. Վերաբերականը որպես խոսքի մաս. տեսակները, կազմությունը և կիրառությունը:
41. Չայնարկությունը որպես խոսքի մաս. տեսակները, կազմությունը կիրառությունը:
42. Բառակապակցություն, տեսակները:

43. Նախադասության հատկանիշները և դասակարգումը:
44. Շարահյուսական կապակցման միջոցները. բառաձևեր, կապեր, շաղկապներ, հնչերանգ, շարադասություն:
45. Շարահյուսական կապակցման եղանակները: Դամաձայնություն, առդրություն և հոլովառություն /խնդրառություն/:
46. Նախադասության գլխավոր անդամներ. նրանց կապակցությունը, արտահայտությունը և շարադասությունը:
47. Գոյականական անդամի լրացումներ. տեսակները, արտահայտությունը, շարադասությունը և կետադրությունը:
48. Բայական անդամի խնդիր լրացումները. տեսակները, արտահայտությունը, շարադասությունը և կետադրությունը:
49. Բայական անդամի պարագա լրացումները. տեսակները, արտահայտությունը, շարադասությունը և կետադրությունը:
50. Նախադասության համադաս /բազմակի/ անդամներ, նրանց կետադրությունը:
51. Միակազմ նախադասություն. կառուցվածքը, տեսակները և կիրառությունը:
52. Բարդ համադասական նախադասություն. կառուցվածքը, տեսակները, կետադրությունը:
53. Բարդ ստորադասական նախադասություն. կառուցվածքը. գերադաս և ստորադաս նախադասություններ. նրանց շարադասությունը և կետադրությունը:
54. Ստորադաս նախադասություններ: Նրանց շարահյուսական-գործառական դասակարգումը:
55. Ենթակա, ստորոգելի ստորադաս նախադասություններ, գերադաս նախադասության հետ կապակցման միջոցներն ու եղանակները:
56. Գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասություններ, գերադաս նախադասության հետ կապակցման միջոցներն ու եղանակները:
57. Խնդիր ստորադաս նախադասություններ. գերադաս նախադասության հետ կապակցման միջոցներն ու եղանակները:
58. Պարագա ստորադաս նախադասություններ. գերադաս նախադասության հետ կապակցման միջոցներն ու եղանակները:
59. Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններ, կառուցվածքը և տեսակները: Ենթաստորադասություն, համաստորադասություն, տարաստորադասություն:
60. Միջանկյալ և ներդրյալ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, նրանց կետադրությունը: Կոչական. արտահայտությունը և կետադրությունը:
61. Մեջբերվող խոսքով նախադասություն: Երկխոսություն: Կետադրությունը:
62. Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզ նախադասության: Դերբայական դարձված և նախադասության կողմնակի անդամներ:
63. Ժամանակակից հայերենի շարադասությունը. սովորական և շրջուն շարադասություն, ոճական հնարավորությունները:
64. Նախադասության տրոհվող անդամներ, կետադրությունը:
65. Կետադրական նշանների տեսակները, կիրառության հիմնական դեպքերը:
66. Գործառական ոճի տեսակները և նրանց հիմնական առանձնահատկությունները:
67. Լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցների համակարգը:
68. Գրաբարի հոլովները և նրանց կազմությունը:
69. Գրաբարի հոլովումները /վերջադրական և ներդրական/: Պարզ և խառը հոլովումներ:
70. Թվականը և նրա տեսակները գրաբարում:
71. Աժականը, նրա տեսակները և համեմատության աստիճանները գրաբարում:
72. Դերանունը և նրա տեսակները գրաբարում:
73. Բայը գրաբարում:
74. Գոյականի հոլովումը գրական արևմտահայերենում:
75. Գրական արևմտահայերենի հնչյունական համակարգը:
76. Բայի խոնարհման առանձնահատկությունները գրական արևմտահայերենում:
77. Դերանունները, նրանց տեսակները և կազմությունը արևմտահայերենում:
78. Դայ բարբառների դասակարգումը: